Գավառի բնապահպանական տեղեկատվության հասարակական Օրհուս կենտրոն

Public Environmental Information Aarhus Center of Gavar

Հասցե. ՀՀ, 1201, ք.Գավառ, ԿենտրոնականՀրապարակ 7
Հեռ. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
Էլ. փոստblejanli@gmail.com

AddressCentral Square 7, Gavar, 1201, RA
Tel. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
E-mail blejanli@gmail.com

AA-008

14 օգոստոսի 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարար
Էրիկ Գրիգորյանին

Տեղեկատվության ստացման հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Արդեն մի քանի տարի է Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում Սևանա լճում գործում են ցանցավանդակային ձկնային տնտեսություններ: Հիմք ընդունելով ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրիը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն ծրագրերի իրականացման ընթացքի մասին, այն է.

- Քանի՞ ցանցավանդակ է այս պահին տեղադրված Սևանա լճում
- Ի՞նչ կազմակերպություններ են շահագործում այդ ցանցավանդակները
- Լճի ո՞ր հատվածներում են տեղադրված ցանցավանդակները (Սևանա լճի քարտեզի վրա խնդրում եմ մատնանշել ցանցավանդակների տեղադիրքը)
- Ի՞նչ տրամագիծ ունեն ցանցավանդակները
- Ինչքա՞ն ձուկ է այս պահին առկա ցանցավանդակներում (նշել ձկան տեսակը, տարիքը, քաշը, յուրաքանչյուր ցանցավանդակում ձկների թիվը)
- Ի՞նչ կեր է օգտագործվում ձկների համար
- Ի՞նչ քանակությամբ ձուկ է բաց թողնվել լիճ վերոնշյալ գործունեության արդյունքում վերջին 5 տարվա ընթացքում, նշելով ամեն տարվա տվյալներն առանձին-առանձին, և թե որ հատվածներում է բաց թողնվել
- Տրամադրել վերոնշյալ ամբողջ տեղեկատվությունը, նշելով յուրաքանչյուր կազմակերպության մասով առանձին-առանձին

Նաև խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն, թե լճում ցանցավանդակները հայտնվելու օրվանից, նախագծերով, կամ լրացուցիչ փաստաթղթերով նախատեսված (ԷՄԻ Ֆրութ կազմակերպության պիլոտային ծրագրից սկսած մինչև «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի, նաև այլ կազմակերպությունների կողմից իրականացրած, եթե այդպիսիք առկա են) ամենամյա մոնիտորինգի արդյունքները՝ յուրաքանչյուր տարվա համար առանձին-առանձին, այն է.

1. Ցանցավանդակային տնտեսությունների գոտում լճի էկոլոգիական որակի մոնիթորինգ՝ ներառյալ - ինդիկատորային ցուցանիշների մոնիթորինգը, - Ջրի և հատակային նստվածքների համալիր մոնիթորինգը,
2. Լճի ամբողջ մակերույթային շերտի արբանյակային մոնիթորինգ,
3. Սևանի ավազանի գետերի, ներառյալ Հրազդան գետի ելքի գոտին, համալիր մոնիթորինգ՝ նաև ջրի որակի,

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով՝
Լիանա Ասոյան՝ Գավառի ՕԿ համակարգող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
DEPUTY MINISTER
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: deputy-minister@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 560
🖷 (374 11) 818 506

№ 3/07.1/30526
«29» «08» 2018 թ.

Գավառի օրհուս կենտրոնի համակարգող
տիկին Լ. Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2018թ. օգոստոսի 14-ի N ԱԱ-008 գրությամբ բարձրացված հարցադրումների՝ հայտնում եմ, որ Սևանա լճում գործող ցանցավանդակային ձկնային տնտեսությունները շահագործվում են «Սևան Ակվա» ՓԲԸ-ի կողմից: Ցանցավանդակները գտնվում են Լճափ համայնքի հատվածում (քարտեզները կցվում են):

Սևանա լճի ցանցավանդակային տնտեսության գոտում լճի էկոլոգիական որակի մոնիթորինգն (ինդիկատորային ցուցանիշների, ջրի և հատակային նստվածքների մոնիթորինգ) իրականացնում է «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամը:

Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի կողմից մանրաձկան բացթողումները համակարգելու նպատակով բնապահպանության նախարարի 2016 թվականի հունիսի 6-ի N 138-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից լիճ բացթողնված մանրաձկան քանակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում եմ ըստ տարիների.

Ամիս,ամսաթիվ տարեթիվ	Ձկանտեսակը	Քանակը	Միջին քաշը	Բացթողնման վայրը
07.06.2016թ.	Գեղարքունի մանրաձուկ	201500 հատ	0,7 գրամ	Կարճաղբյուր գետ
20.06.2016թ.	Գեղարքունի մանրաձուկ	221076 հատ	0,65 գրամ	Լիճք,Կարճաղբյուր գետեր
11.07.2016թ.	Ամառային իշխանի մանրաձուկ	282,900 հատ	0,07 գրամ	Ծակքար,Բախտակ, Արգիճի գետեր
16.09.2016թ.	Ամառային իշխանի մանրաձուկ	215,212 հատ	0,23 գրամ	Մասրիկ գետ

25.05.2018թ.	Գեղարքունի մանրաձուկ	60000 հատ	0,64 գրամ	Մասրիկ,Կարճաղբյուր գետեր

Հայտնում եմ նաև, որ Սևանա լիճ թափվող հիմնական գետերի (Ձկնագետ, Մասրիկ (նաև Սոթք վտակի), Մարտունի, Շողվագ, Ծակքար, Արգիճի, Վարդենիս, Կարճաղբյուր և Գավառագետ) և Հրազդան գետի ջրի որակի (ֆիզիկաքիմիական ցուցանիշների մասով) մոնիթորինգն իրականացնում է բնապահպանության նախարարությունը: Մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են բնապահպանության նախարարության /www.mnp.am/ և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի /www.armmonitoring.am/ պաշտոնական կայքերում:

Մնացած հարցերի պատասխանները դուրս են բնապահպանության նախարարության իրավասությունների շրջանակից, դրանք կարող եք ստանալ «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամից:

Առդիր՝ 1 թերթ:

Invalid signature

X

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ.Սանոսյան

ՏՀՀԿՎ
Ա.Սուքիասյան
011 818 517

«ՑԱՆՑԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԻ ՍԽԵՄԱ